



17(592)

6.07.2020

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐ

Лусар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusar

ՍԿՍՎԱԾ ԵՆ ԲՈՒՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հուլիսի 1-ից Արցախում մեկնարկել են բուհերի ընդունելության քննությունները: Առաջին օրը ներբուհական քննություններ հանձնող դիմորդները տվյալ բուհերում ստուգվել են մասնագիտական

յանը տեղեկացրեց, որ նախօրեին դպրոցի ամբողջ տարածքը, բակը, մարզադահլիճը, որտեղ անցկացվում է քննությունը, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կայանի կողմից փափուկապատվել են:



ԳԹԿ տնօրենի տեղակալ Արև Ղուլյանն ասաց, որ Կենտրոնի կողմից ամեն ինչ արվել է դիմորդների առողջության ապահովության համար: Սոցիալական հեռավորությունը պահպանված է, այդ նպատակով նաև զծանշում է արված: Առավոտյան ժամը 8-ն անց կեսին դիմորդները հրավիրվել են քննական կենտրոն՝ յուրաքանչյուրը ստանալով սանիտարական անհատական պաշտպանիչ միջոցներ և գրիչ: Երկու օր առաջ ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը առջանց հորդորել էր ծնողներին, որ քննություն հանձնող իրենց զավակներին հաջողություն մաղթեն տնից: Ծնողները հիմնականում ականջալուր են եղել այս հորդորին, բայց, այնուամենայնիվ, դպրոցի բակում հավաքվածներ կային, որ հիմնականում շրջաններից:

առարկաներից: Իսկ հուլիսի 2-ին դիմորդներն առաջին միասնական քննությունն են հանձնել օտար լեզուներից՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսաց լեզու առարկաներից. անգլերենից՝ 96, ֆրանսերենից՝ 2, ռուսաց լեզվից՝ 19 դիմորդ: Ստեփանակերտում և Երևանում ստեղծված վեց քննական կենտրոններից այդ օրը քննություններ են անցկացվել հ.1, հ. 2, հ. 7 հիմնական դպրոցներում: Քննություններն անցկացվում են անվտանգության աննախադեպ պայմաններում՝ հաշվի առնելով պարետատան որոշմամբ նախատեսված անվտանգության կանոնները:

Հ. 7 դպրոցի քննական կենտրոնում, որտեղ «Լուսար»-ը եղավ մինչև քննությունն սկսվելը, ամեն ինչ համապատասխանում էր արտակարգ վիճակի պայմաններին: Քննական կենտրոնի ղեկավար՝ դպրոցի տնօրեն Անահիտ Պողոս-

յակ ինքը՝ բաժնի պետը, վերահսկողության նպատակով շրջում է քննական կենտրոններով, որպեսզի ծառայությունն իրականացվի պատշաճ կերպով:

Քննության թափանցիկությունն ապահովելու համար, ինչպես ամեն տարի, քննական կենտրոններում տեսախցիկներ են տեղադրված, և ծնողները բակում գտնվող մոնիտորի միջոցով կարող են հետևել քննության ընթացքին: Ոստիկանության և ԳԹԿ ներկայացուցիչները հետևում են, որ նրանք մոնիտորին մոտենան հինգ-հինգ՝ պահելով սոցիալական հեռավորությունը:

Մեր այդտեղ գտնվելու պահին քննական կենտրոն հերթով այցելեցին ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանը, ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը: Ծնողներից մեկը հարց ուղղեց ԳԹԿ տնօրենին, թե արդյո՞ք դրական ստացած դիմորդը կընդունվի, և ստացավ պատասխան, որ դա կախված կլինի մրցույթից: Քանի տեղ նախատեսված է կառավարության որոշումով, այնքան դիմորդ կընդունվի: Անգլերեն լեզու մասնագիտությունում կա մրցույթ, և բնականաբար, կընդունվեն առավել բարձր միավորներ ստացած ու առաջին տողով հայտագրված դիմորդները:

ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանը, չնայած հունիսի 29-ին էր առջանց հաջողություններ մաղթել դիմորդներին՝ հորդորելով վստահել իրենց ուժերին, նաև առկա ձևով ողջունեց նրանց՝ ասելով, որ նրանք վստահեն իրենց ուժերին. այս սերունդը կողմնակի աջակցության կարիք չունի:

Հիշեցնենք, որ արտակարգ վիճակով պայմանավորված՝ դիմորդներն այս տարի ընդամենը մեկ ընդունելության քննություն են հանձնում: Այս փոփոխությունը դրական գնահատեցին ծնողներն ու դիմորդները, քանի որ վերջիններս կենտրոնացել են միայն տվյալ առարկայի վրա:

Միասնական քննությունը նախատեսված է 2,5 ժամ: Այս տարի նախորդ տարիների 5 օրվա փոխարեն քննությունների գնահատականները պատշաճաբար հրապարակվում են քննությունից երեք օր անց, բայց, ինչպես միշտ, դիմորդները կարող են պատժենալ իրենց աշխատանքները և, քննությունից անմիջապես հետո համեմատելով ԳԹԿ կայքում տեղադրված ճիշտ պատասխանների հետ, իմանալ իրենց միավորները:

ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանից տեղեկացանք, որ քննություններն անցել են հանգիստ, առանց կարգի խախտման և որևէ միջադեպի:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պաշտոնական

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՅ ԲՈՒՆԵՐՈՒՄ ԿՊՈՐԾԻ ԱՆՎՃԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ



երի բակալավրի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա ուսուցման համակարգի բոլոր ուսանողների համար կրթությունը կլինի անվճար՝ կառավարության կողմից ուսման վարձավճարների փոխհատուցման եղանակով: Մասնավոր բուհերի դեպքում սկզբունքը կվերաբերի միայն ընթացիկ տարում ուսումնական հաստատություն ընդունվածներին: Նախագահի հանձնարարությամբ որակյալ կրթություն ապահովելու նպատակով պարբերաբար աշխատանքներ կիրականացվեն նաև բուհերի դասախոսների վերապատրաստման և կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ:

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունիսի 24-ին ընդունել է ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանին: Հանդիպմանը քննարկվել է կրթության ոլորտում իրականացվող ծրագրերին և նախատեսվող բարեփոխումներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Լուսինե Ղարախանյանը հանրապետության նախագահին է ներկայացրել համավարակի պայմաններում նոր ուսումնական տարում առցանց և կենդանի ուսուցման արդյունավետ կազմակերպման համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուհերի համար ուսուցման առցանց հարթակի մշակմանը վերաբերող հարցեր: Հատուկ անդրադարձ է արվել անվճար ու որակյալ բարձրագույն կրթության կազմակերպման ուղղությամբ իրականացվող քայլերին:

Հանրապետության նախագահը նշել է, որ համավարակի տեսլականները կարող են օգտագործվել ուսուցմանը՝ հաշվի առնելով բոլոր հնարավոր ռիսկերը: Անդրադառնալով անվճար բուհական կրթության ծրագրին՝ Արայիկ Հարությունյանը նշել է, որ պետական հավատարմագրված բու-

հարների փոխհատուցման եղանակով: Մասնավոր բուհերի դեպքում սկզբունքը կվերաբերի միայն ընթացիկ տարում ուսումնական հաստատություն ընդունվածներին: Նախագահի հանձնարարությամբ որակյալ կրթություն ապահովելու նպատակով պարբերաբար աշխատանքներ կիրականացվեն նաև բուհերի դասախոսների վերապատրաստման և կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ:

ՀՀ բուհերում սովորող արցախցի ուսանողների պարագայում անվճար ուսուցման ծրագիրը կգործի մասնակի: Մասնավորապես անվճար ուսման հնարավորություն կունենան միայն այն ուսանողները, որոնց ընտրած մասնագիտությունները Արցախի բուհերի կողմից առաջարկվող ցանկում չկան: Բացի այդ, նրանց հետ կկնքվեն համապատասխան պայմանագրեր ուսման ավարտելուց հետո Արցախ վերադառնալու և տեղում որոշակի ժամանակահատված պարտադիր աշխատելու մասին: Խախտելու դեպքում բուհերի շրջանավարտները պետք է պետությանը փոխհատուցեն ուսման հորձան ստացած ամբողջ գումարը և որոշակի չափով տուգանք:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ոլորտին վերաբերող այլ հարցեր:

ՆԵԱՆԱԿՎԵԼ Ե ԱՐՅԱՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆՈՐ ՏՆՕՐԵՆ

Հունիսի 29-ին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանն այցելել է Արցախի գիտական կենտրոն, որի տնօրեն է նշանակվել Կենտրոնի փոխտնօրեն, տեխնիկական գիտությունների թեկնածու Անյուտա Սարգսյանը:

Նախարարը շնորհակալություն է հայտնել գիտական կենտրոնը յոթ տարի ղեկավարած՝ պատմական գիտությունների թեկնածու Ստեփան Ղադայանին՝ նշելով, որ այդ տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել գիտական այս հաստատության շենքային պայմանների բարելավման և հատկապես նրա գործունեությունը նոր որակի հասցնելու ուղղությամբ:

Լ. Ղարախանյանը խոսել է նաև Կենտրոնի հետագա անելիքներից. «Կա գիտական թեմաների արդիականացման խնդիր: Նախարարությունն այսուհետ ֆինանսավորելու է այնպիսի թեմաներ, որոնք կիրառական նշանակություն ունեն, և հետաձուտ է լինելու դրանց առևտրայինացմանը: Հանրությունը պետք է տեսնի գիտական արդյունքը: Գիտական կենտրոնի կարգավիճակի փոփոխության հարցը ևս

արդիական է: Եթե կարգավիճակը փոխենք, մենք չենք ունենա գիտական վերջնարդյունքի առևտրայինացման խնդիր: Արցախի գիտականները, հատկապես՝ երիտասարդ, ունեն խնդիր միջազգային դրամաշնորհների և ծրագրերի մեջ ընդգրկվելու, բայց այդ հարցը դարձյալ կապված է Կենտրոնի կարգավիճակի փոփոխության հետ:

Գիտության պահանջարկը պետության պատվերի հետ համապատասխանեցնելու անհրաժեշտություն կա: Այս դաշտը տարբային է: Բուհերը, նաև Կենտրոնը պետք է ունենան բազային ֆինանսավորում և աշխատեն այն թեմաներով, որ որպես պատվեր տալիս է պետությունը: Հի կարելի գիտական աշխատանք արվի, և այն մնա որպես արված աշխատանք: Սա շնայություն է, մենք այդքան հարուստ չենք»:

Լ. Ղարախանյանը վստահեցրեց, որ կաջակցի գիտական կենտրոնի նախաձեռնություններին՝ մասնավորապես հողվածներով, աշխատություններով միջազգային գիտական հարթակներում հանդես գալու համար:



եկածներն էին, որոնք ուղեկցում էին իրենց երեխաներին: Ստեփանակերտի անչափահասների գործերով բաժնի պետ Վահրամ Բալայանն ասաց, որ հասարակական կարգի պահպանման և նոր կրթական փոփոխության համար կարևոր է ուսուցիչների և ուսանողների միջև ստեղծված հարաբերությունը:

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԵՐԸ՝ ՊԵՏՈՒԹԵՆԱՍՏԵՐԻՆ ԱԶԳ



Վանի թագավորության գլխավոր զինանշանը՝ առյուծը

Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը՝ հայ ժողովուրդը, ունի իրեն բնորոշ մի շարք բարձրարժեք որակներ և յուրահատկություններ: Մենք համաշխարհային պատմության խորքային ուսումնասիրության հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ հայերը պետութենաստեղծ ազգ են: Դարերի ընթացքում մեկ անգամ չէ, որ հայությունը հիմնել է իր պետականությունը, կորցրել, նորից վերականգնել և նորից կորցրել: Բայց անկախ պետականություն ունենալու հայերի ծագումը մնացել է անկտրում: Այդպես է եղել հնագույն շրջանում, այդպես է եղել միջին դարերում, այդպես է եղել նոր և նորագույն շրջանում, այդպես է մեր օրերում: Դա դրսևորվել է երկու կերպ:

Առաջին. ազգային պետականության հաստատում իր բնօրրանում՝ բուն Հայաստանում:

Երկրորդ. օտար երկրների և ժողովուրդների պետականության ստեղծում, պահպանում և օժանդակում: Դա համաշխարհային պատմության մեջ բացառիկ երևույթներից մեկն է:

Առաջին կամ բուն Հայաստանի առումով պետութենաստեղծումն իրականացվել է մեկը մյուսին հաջորդաբար Վանի (մ.թ.ա. 858-մ.թ.ա.585), Երվանդունիների (մ.թ.ա. 570-մ.թ.ա.195), Արտաշեսյանների (մ.թ.ա.189-մ.թ.ա.1), Արշակունիների (54-428 թթ.) և Բագրատունիների (885-1045թթ.) հայկական թագավորական դինաստիաներով, Կիլիկյան Հայաստանով (1080-1375թթ.): Պետության գաղափարը ամուր ստատ է հայության գեներում, և նա ուր գնում է, որ երկրում հաստատվում է, պետության գաղափարն իր հետ է տանում:

Հաստատվելով օտար երկրներում՝ հայկական հավաքականությունը որպես կանոն ակտիվ դերակատարում է ունեցել և շարունակում է ունենալ օտար ժողովուրդների պետական կառավարման համակարգում, այդ պետությունների ամրապնդման ու կայացման գործում, որը հաստատվում է բազմաթիվ օրինակներով:

428թ. Արշակունիների անկումից հետո թեև Հայաստանը կորցրեց ինքնուրույն գործոն լինելու իր կարգավիճակը, սակայն անգամ այդ պայմաններում, V-VII դարերում՝ մարզպանության շրջանում Հայաստանը հլու- հնազանդ ենթակա չէր, այլ կարողանում էր յուրահատուկ ձեռով դրսևորել իր կամքը և պահպանել իր ազգային կերպարը, որի հետ հարկադրված էր հաշվի նստել Սասանյան Պարսկաստանը: Ընդ որում, հայ նախարարները պահպանում էին իրենց ժառանգական իրավունքները, տիրույթները, համապատասխան տեղը կառավարման համակարգում: Ուշագրավ է նաև այն հանգա-

մանքը, որ հայկական ռազմական ուժերը չլուծարվեցին կամ չտարրալուծվեցին պարսկական ռազմական ուժերի մեջ: Նրանք պահպանեցին նաև այլ արտոնություններ: Այս բոլորը հիմք է ծառայել այն տեսակետի համար, որ Արշակունիների անկումից հետո էլ յուրահատուկ կերպով պահպանվել է թագավորական, այսինքն՝ պետական իշխանությունը, որն անցել էր հայ նախարարներին:

Այդ շրջանում՝ 640-ական թվականներին, քաղաքական քարտեզի վրա հայտնվում է մի նոր պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որը պարտության է մատնում Սասանյան Պարսկաստանին, նվաճում այն և այլ տարածքներ: Տեղի են ունենում նաև բախումներ խալիֆայության և Հայաստանի միջև: Հայաստանի իշխան թեոդորոս Ռշտունին, որը շատ հեռատես, ճկուն և խելացի պետական այր էր, մտահոգ Հայաստանի ապագայով և անվտանգության խնդիրներով, որդեգրում է նոր ռազմավարություն, որի արդյունքում 652թ. ստորագրվում է հայ-արաբական պայմանագիր, որը հայ պատմիչ Սեբեոսը բնութագրում է որպես «Հաշտության պայմանագիր»: Թեոդորոս Ռշտունին Արաբական խալիֆայի կողմից վերստին հաստատվեց ոչ միայն Հայոց իշխանի իր պաշտոնում, այլև նշանակվեց նաև Վիրքի և Աղվանքի իշխան: Այսպիսով, Թեոդորոս Ռշտունու իշխանության ներքո հայտնվեցին Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և ողջ Կովկասը մինչև ճորպ պահակ: Հետագայում իրադրությունը փոխվում է, և արաբները ներխուժում են Երուսաղեմ, Հայաստան, Քարթլի և կովկասյան այլ շրջաններ: Երուսաղեմի Հայ եկեղեցու առաջնորդը, կանխատեսելով արաբների մոտակա ներխուժումը Երուսաղեմ, ճանապարհորդում է Սեբքա, հանդիպում իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեին և նրանից ստանում հրովարտակ, որը երաշխավորում էր Երուսաղեմում բնակվող հայերի կյանքի և գույքի ապահովությունը: Միաժամանակ մարգարեն ճանաչում է Հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմի բոլոր այն սրբատեղիների վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ: Երբ խալիֆա Օմարը 638թ. գրավում է Երուսաղեմը, նա իր նոր հրովարտակով հաստատում է բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմադ մարգարեն տվել էր Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը: Հետագայում Սալահ ադ-Դիմը նույնպես ճանաչում է Երուսաղեմի Հայ եկեղեցու բոլոր այն իրավունքները, որ նրան տվել էին իր նախորդները:



Արտաշեսյանների թագավորության խորհրդանշանը՝ Արծիվը, մագիլների տակ՝ թշնամիները

Հայաստանյայն ոտրպատրոյ գրակայնեթ՝ Անիից, XIII դ. / ՀՊԹ



Բագրատունյաց հարստության զինանշանը

VII դարի կեսերին վերսկսվում են արաբական նվաճումները, որոնք ծավալվում են երեք ուղղություններով՝ արևմտյան, արևելյան և հյուսիսային: Արաբական խալիֆայությունը, ձգտելով ծավալվել դեպի հյուսիս, նպատակ ուներ նվաճել Կովկասը: 701թ. տեղի ունեցավ Հայաստանի նվաճումը: Նույն այդ թվականին Արաբական խալիֆայությունը նվաճեց նաև Վրաստանը, Աղվանքը և մերձկասպյան տարածքները: Հարավային Կովկասն ամբողջությամբ անցավ խալիֆայության տիրապետության տակ: Եվ դրանից հետո տեղի ունեցավ մի կարեւոր իրադարձություն: Արաբական խալիֆայությունը վերոնշյալ նվաճված տարածքներից 701թ. ստեղծեց նոր վարչական տարածք կամ միավոր, որը կոչվեց Արմինիա՝ Հայաստան: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը (Ջուրգան), Աղվանքը (Առանը), մերձկասպյան շրջանները, որոնց հիման վրա հետագայում ձևավորվեցին Շիրվանը և Դեբեդեղը (Բարալ-Աբվար): Արմինիա վարչատարածքային միավորի կառավարիչը կոչվում էր ոստիկան, որի նստավայրը Հայոց հին մայրաքաղաք Դվինն էր: Սա նույնպես բացառիկ իրողություն է: Արմինիան ըստ էության պետություն էր պետության մեջ, տվյալ պարագայում՝ Արաբական խալիֆայության մեջ: Դա ուղղակի շքմեցուցիչ փաստ է:

Հետագա տարիներին սրվում են հարաբերությունները Արաբական խալիֆայության ու Հայաստանի միջև, որի արդյունքում, ի վերջո, 885թ. Հայաստանին հաջողվեց նվաճել իր անկախությունը: Արաբական խալիֆա Մուքամիդը ստիպված էր հաշտվել կատարված իրողության հետ և Աշոտ Բագրատունու ճանաչել Հայաստանի թագավոր, նրան թագ ուղարկել, ինչպես նաև արքային վայել նվերներ՝ թագավորական զգեստներ, պարզեներ, ընծաներ, հրեղեն երկվարներ, զենքեր ու զարդեր: Նա օժվում է «Հայոց թագավոր Աշոտ I» անվամբ, իսկ Բագրատունիները հաստատվում են որպես կառավարող թագավորական դինաստիա:

Այսպիսով, Արշակունիների անկումից 457 տարի և արաբական նվաճումից մոտ 200 տարի անց Հայաստանը վերականգնեց իր անկախ պետականությունը: Նա դարձավ իրենից որոշակի ուժ ներկայացնող երկիր, որը ներազդում էր աշխարհաքաղաքական մթնոլորտի ձևավորման և քաղաքական ուժերի հավասարակշռության հաստատման գործընթացի վրա: Ասվածն ավելի է հաստատվում, եթե նկատի ունենանք, որ արաբական խալիֆան և բյուզանդական կայսրը մշտապես մրցակցում էին Հայաստանն իրենց կողմը գրավելու և դրանով տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու և ազդեցությունն ուժեղացնելու համար: Այդ պարագան բարձրացնում էր Հայաստանի

կարեւորությունը հաշա կայսեր և խալիֆայի:

Բյուզանդիային հաջողվեց տապալել Բագրատունիների դինաստիան և իրեն ենթարկել Հայաստանը: Ահա այսպես Հայաստանը կրկին կորցրեց իր անկախությունը և մոտ հինգ դար հայտնվեց օտար նվաճողների իշխանության ներքո, որոնք մորելիս պես հայտնվում էին տարածաշրջանում:

Սակայն պետք է նշել, որ տարբեր երկրներում, մասնավորապես արաբական երկրներում, Բյուզանդիայում, Կիլիկիայում, Ռուսաստանում կենտրոնացված էին ազդեցիկ հայկական համայնքներ, որոնք կարեւոր քաղաքական, ռազմական, տնտեսական և մշակութային դիրքեր ունեին և ներգրավված էին հյուրընկալ երկրների հասարակական և քաղաքական, անգամ կառավարման համակարգում: Ահա հենց այս հայկական համայնքներն էին, որ ամենակարգավոր կերպով ներգրավվել էին հյուրընկալ երկրների և ժողովուրդների պետականաստեղծ գործունեության մեջ, նրանց կայացմանը և զարգացմանը: Կանգ առնենք դրանցից մի քանիսի լուսաբանության վրա:

1. Բյուզանդական կայսրություն: Հայկական դինաստիա: Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը 395թ. բաժանվեց երկու մասի՝ արևմտյան, որը շարունակեց կոչվել Հռոմեական կայսրություն, և արևելյան, որը կոչվեց Բյուզանդական կայսրություն: Դրանք առանձին, միմյանցից անկախ կայսրություններ էին: Բյուզանդական կայսրությունում մեծաքանակ էին հայերը, այդ թվում՝ պաշտոնյաները, զինվորական գործիչները, հոգեւորական այրերը, որոնք մեծ ազդեցություն և դիրք ունեին: Նրանք այնքան ուժեղ էին, որ 867թ. գրավեցին իշխանությունը, Բյուզանդիայի կայսրությունում հաստատվեց Հայկական դինաստիան: Հայկական դինաստիայի հիմնադիրը հայազգի Բարսեղ Առաջինն էր: Հայ կայսրերը Բյուզանդիան կառավարել են համարյա երկու դար, մոտ 190 տարի՝ 867-1057 թթ.:

2. Ռուսիայի ուղղափառության ընդունումը և հայազգի Աննա իշխանուհու դերը: Սկզբնական շրջանում Բյուզանդական կայսրությունը կառավարում էին համակայսր երկու հայ եղբայրները՝ Բարսեղ Երկրորդ Բուլղարասպանը և Կոնստանտինը: Հայերի ղեկավար դերակատարումը չի սահմանափակվել միայն Բյուզանդիայով: Հայկական դինաստիան բախտորոշ դերակատարում է ունեցել նաև Ռուսիայի ճակատագրում՝ կապված 988թ. Ռուսիայի՝ քրիստոնեությունը ընդունելու հետ: Նրանց քրոջ՝ Աննայի հետ ամուսնանալու ցանկություն է հայտնում Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավովիչը: Ամուսնանալու համար Աննան պայման է դնում, որ Վլադիմիրը պետք է ընդունի քրիստոնեությունը: Վերջինս համաձայնվում է և, «վերադառնալով մայրաքաղաք (Կիև-Ն.Յ.), Վլադիմիրը հրամայում է ոչնչացնել կուռքերը, իսկ ժողովուրդը մկրտվեց Դնեպրում»: Ռուսիան ընդունում է ուղղափառ քրիստոնեություն: Ուղղափառությունը՝ Պրավոսլավիեն, ինչպես հայտնի է, ռուսական պետության հիմքերի հիմքն է: Մյուս կողմից, եթե մի պահ ենթադրենք, որ Ռուսիան ընդունել իսլամ, ապա դժվար է պատկերացնել, թե ինչպես կընթանար համաշխարհային պատմությունը: Հայոց իշխանուհի Աննան, որը դարձավ Ռուսիայի իշխանի առաջին տիկին, բախտորոշ և դրական դերակատարում ունեցավ ոչ միայն Ռուսիայի, այլև համաշխարհային մասշտաբով:

Վերջը՝ հաջորդիվ

Նիկոլայ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ Պարսկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԵՎ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՍԻՐՈ ԱՌԱՋ...



Չարյուր տարի առաջ պատմական Ուտիք աշխարհի հայաշեն ու հայաբույր Գետաշենում Ջհանանց մեծ գերդաստանը հարստացավ ևս մեկ ծննդով. Վահան և Սիրանուշ Ավագյանների ընտանիքում լույս աշխարհ եկավ Համեստ անունով աղջիկը: Նախախնամությամբ էր սահմանված այս աղջնակի առաքելությունը, քանզի հետագայում նա իր ազգամիջեր գործունեությամբ և բնավ ոչ համեստ վաստակով պիտի անգնահատելի ու բացառիկ դերակատարություն ունենար հայ որբուկների մի քանի սերնդի համար: Ոչ միայն դաստիարակի, այլև մոր ամենատեսն աչքով ու գթառատ սրտով պիտի մոխիրներից արարեր իր հարյուրավոր սաների անցնելիք ուղին՝ հանց հուստ փարոս ուղեկցելով նրանց ողջ կյանքում:

Խիտ անտառներով ու այգիներով շրջապատված չքնաղ Գետաշենն է օրորել նրա մանկության ու պատանեկության երազային տարիները: 12-րդ դարում ուժգին երկրաշարժից հետո Մռավի լեռնաշղթայի ամենաբարձր լեռան՝ Ալիարակի փլուզումից առաջացած համանուն լիճը, որ նաև Կանաչ անունն է ստացել տեղաբնակների շուրթերին, երկնքից կանաչախիտ անտառների խորքը նետված հսկայական մարգարիտի նման զարդարում էր գյուղի շրջակա տեղանքը և գետաշենցիների սիրելի հանգստավայրն էր: Երբեմնի մեղիքանիստ գյուղը փռված է Կուրակ գետի գեղատեսիլ հովտում, որի ջրերն այնքան վիժի ու գուլպլ էր, որ բնակիչները խմում էին նրա ջրից:

...1927 թվական, սեպտեմբերի 1: Գյուղի բերքառատ աշունը գործի էր դրել աշխատասեր ու հյուրասեր ժողովրդին. տղամարդիկ հանդերձ իրենց վաստակն էին տուն հասցնում, իսկ տնայար տանտիրուհիները տնամերձի ու հանդերձ բարիքն էին ամբարում մառաններում: Սիրանուշ մայրը աղջնակի՝ դեռ յոթնամյակը չբոլորած Համեստի ծեռքից բռնած՝ տարակ իրենց տնից ոչ հեռու գտնվող դպրոցը՝ առաջին դասարան: Գյուղական դպրոցը մեծ ու շքեղ չէր, բայց առաջին ուսուցչուհու՝ Նունե Գարդիշյանի շնորհիվ այն դարձավ հարազատ օջախ շատերի համար: Ծերացած, կնճիռներով ակոսված դեմքով, ճերմակահեղ, մեջքից քիչ թեքված ուսուցչուհին գրկաբաց ընդունեց աղջկան, որը մի պահ զարմացած՝ մերթջահել ու սիրուն մորն էր նայում, մերթ տարեց ուսուցչուհուն և չէր ուզում բաց թողնել մոր ձեռքը, բայց մնաց: Անցնող օրերի հետ ուսուցչուհին գեղեցկացավ ու սիրունացավ աղջկա աչքին: Տասնյակ տարիներ անց, երբ որբանոցի մանկավարժի ու դաստիարակի ծանրաբեռ վաստակով Համեստ Ավագյանը դիմավորեց կյանքի աշունը, գիշերային բունը փախցնող հուշերի երանից ազատվելու համար

դրանք թղթին հանձնեց: Ամուսնու մահից հետո նրա բանաստեղծությունների հետ «Կյանքիս արծազանքը» գրքուկում հրատարակեց նաև իր հուշերը, որոնց մեջ նաև իր առաջին ուսուցչուհու լուսն կերպարն է հանուն:

Ծանոթանալով Համեստ Ավագյանի հուշագրությանը՝ համոզվեցի, որ նրա մանկավարժական վարպետության ակունքը իր առաջին ուսուցչուհին էր: Նրա մոտ անցկացրած ուսումնառության երեք տարիները նա համարում էր իր կյանքի ամենագեղեցիկ շրջանը: Ահա մի պատահիկ այդ հուշերից. «Ամեն առավոտ մտնում էինք դասարան շարքով ու երգով: Իմ ուսուցչուհին դասամիջոցներին կազմակերպում էր զվարճալի խաղեր, ուներ փոքրիկ գարնոշկա, որով ինքը նվագում էր, մենք էլ՝ երգում ու պարում: Տարվա ընթացքում նա էր ստեղծում բոլոր դիդակտիկ նյութերը, դասը մատչելի դարձնում: Նա եկել էր Երևանից, ապրում էր վարձով, նրա այդ սենյակն անգամ երեխաներին թվում էր մի հեքիաթային անկյուն: Ուներ փոքրիկ պատշգամբ, որին կից օդում պատրաստել էր փոքրիկ տեղ, լցրել հողով ու ցանում էր տարբեր տեսակի բանջարեղեն: Ազատ ժամերին նա մեզ փոքրիկ խմբերով տանում էր իր տուն, ուրախացած ցույց տալիս իր այդ փոքրիկ բանջարանոցը: Խոր աշնանը նա հավաքում էր բերքը, մեր դասարանում պատրաստում աշնանային գեղեցիկ անկյուն, որի միջոցով և՛ սովորեցնում բանջարեղենի ճանաչումը, և՛ նրանց ճիշտ անվանումը: Կիրակի օրերը նա մեզ իր տուն էր հրավիրում, որտեղ երկար սեղանի վրա մախուրոք շարված էին լինում գունավոր թղթեր, սուսինձ, մկրատներ, ու մենք երկար ժամանակ իր հետ մտած տարբեր ձևվածքներ էինք կտրտում և մեծ հաճույք ստանում մեր կատարած աշխատանքից ու մեր ուսուցչուհուց»: Հետո նա բազմաթիվ ուսուցիչներ է ունեցել, ավարտել դպրոցը, սովորել Երևանի մանկավարժական ինստիտուտի մախադարոցական բաժնում, բայց առաջին ուսուցչուհին միշտ էլ մնացել է առաջին տեղում՝ բացառիկ ու անփոխարինելի: Այնժամ ինքը չէր էլ կարող գուշակել, որ նաև իրեն էր վերապահված սիրելի ուսուցչուհու պես անցնել բացառիկ ու եզակի անհատականությանն ի վերուստ տրված ծանր, բայց և պատվաբեր ուղի...

Նրա պատանեկության տարիներին Ջհանանց բազմանդամ գերդաստանում կյանքն ընթանում էր բնականոն հունով՝ հանապազօրյա աշխատանք, ուսում, ընտանեկան ուրախություններ ու առտնին հոգաշատ առօրյա, հետո սկսվեցին գյուղի կոլեկտիվացման ծանր տարիները, ապա սարսափներով լեցուն 1937 թիվը, բայց պատերազմի բռնը ցնցեց գյուղը: «1941թ. հունիսի 22-ին մեծ գերդաստանով մտած ուրախանում էինք, հանկարծ ռադիոյով լսվեց Լևիտանի ձայնը, որը միանգամայն արտակարգ էր. կարդում ենք Համեստ Ավագյանի հուշերում: Բոլորս մի պահ կես-զարմացած-կես-սարսափած վեր կացանք, մոտեցանք ռադիոյին՝ կարծես ավելի լավ լսելու: Այո, լսեցինք ամենասարսափելիին՝ պատերազմ է, ու լուռ գլխիկոր կանգնեցինք բոլորս, և այդ լուռության մեջ մեկ էլ լսվեց մեր փոստատարի ձայնը, որը դեռ տեղյակ չէր հաղորդմանը:

- Նամակ ունեք, եկեք վերցրեք»... Նամակը եղբորից էր՝ Համեստից, որ զինվորական ծառայության մեջ էր Բելոռուսիայում: Նա գրում էր, որ «սրիկա գերմանացիները» հաճախակի են խախտում սահմանը և տարբեր առիթներով հար-

ծակվում սահմանապահների վրա, բայց վստահեցնում էր, որ եթե հանկարծ որևէ վատ բան լինի, իրենք անպայման կհաղթեն, և ինքը հաղթանակով կվերադառնա: Այո՛, հաղթեցին, բայց եղբայրը, որ ուսանող էր և արդեն հարսնացու ուներ, այդպես էլ չվերադարձավ, ընկավ Բելոռուսիայի համար մղվող կռիվներում՝ վշտահար ծնողների աչքը թողնելով առաջնեկի ճամփին: Գյուղը կարծես միանգամից դատարկվեց, հարյուրավոր երիտասարդներ մեկնեցին ռազմաճակատ, նրանց փոխարինեցին մայրերն ու քույրերը, նրանց երեխաները: Աշխատում էին գիշեր ու ցերեկ, դպրոցականներն օգնում էին մեծերին, արվում էր անկարելիին՝ ապրելու և ռազմաճակատին օգնելու համար: Շատերն ընկան հեռու-հեռավոր, օտար ավերում, համոզված, որ իրենց մի բուռ հայրենիքի համար են կռվում: Նրանց փոխարեն «սև թղթերը» եկան, և սևազգեստ ու սևաիրտ մայրերի ու կանանց սպասումը նրանց հետ դազաղ մտավ:

Իր աշխատանքային կենսագրության ճակատագրական ճամփաբաժանը հենց աշխարհաստան պատերազմը սահմանեց: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Համեստ Ավագյանը գործուղվում է աշխատելու Խանլարի շրջանի հ.1 մանկատանը, որը տեղակայված էր դեռևս ցարական ժամանակներից ամառանոցի համբավ վայելող Հաջիբեղում: Ի դեպ, պատմական Ուտիք նահանգի Գարդման գավառի այս գյուղը՝ Հաճիշին անվամբ, գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվել է 17-րդ դարի առաջին կեսին՝ կաթողիկոսական կոնդակներից մեկում: Այստեղ նա աշխատում էր աղջիկների խմբում որպես դաստիարակչուհի, իսկ ամուսինը՝ Վահան Հակոբյանը, մանկատան խորագիտակ ու բազմահմուտ ուսուցիչներից էր: Նորատի կնոջ զգայուն ու նուրբ հոգին չէր հաշտվում հայ որբուկների ճակատագրի հետ, անչափ ծանր էր նրա համար ամեն օր, ամեն ժամ տեսնել և աշխատել նրանց հետ: Ինչքան նրբանկատություն, սեր, կարեկցանք, հոգատարություն ու համբերություն էին ամբարված նրա անհատակ հոգում, որ կարողացավ մայրական գուրգուրանքով ու սիրով ջերմացնել կյանքի դաժան հարվածներից վիրավոր նրանց սրտերը, վստահություն ու հավատ ներշնչել սեփական ուժերի հանդեպ, որպեսզի չդառնանան ու չչարանան, կարողանան կյանքում գտնել իրենց տեղը: Այնքան լավ էր աշխատում աղջիկների հետ, որ խումբը շուտով համալրվեց Շուշիի մանկատանից բերված որբուկներով: Հանձնի ընկեր Համեստի՝ աղջիկները վերագտան իրենց կորցրած մայրերին՝ նրա ընտանիքում ճաշակելով ծնողական սեր ու ընտանեկան ջերմություն, հասակ առնելով նրա երեխաների հետ:

Ընկեր Համեստ և ընկեր Վահան ամուսնական զույգը Աստծո պարզևն էր հարյուրավոր այն սաներին, որոնց բախտ է վիճակվել ուսանել ու դաստիարակվել նրանց հոգատար ծեռքի ներքո: Իրենց երեք զավակներից՝ Սիլվա-Էլլայից, Ջուրայից ու Նորայից անբաժան, նրանք դաստիարակեցին և մեծ կյանքի ուղեգիր տվեցին բազմաթիվ որբերի: Տեղին է հիշատակել նաև ընկեր Վահանի դերը. ոչ միայն գիտելիքների անսպառ շտեմարան էր իր սաների համար, այլև հայրական սիրտ ակունք: Լայնախոս ու բազմուսում մի այր էր՝ քաջածանոթ հայ և համաշխարհային գրականությանը, Արևելքի ու Արևմուտքի փիլիսոփայական մտքին, նաև ստեղծագործում էր: Ծննդով քարինտակցի էր՝ զավակը Արցախյան ազատամարտում հերոսացած մի գյուղի, որը քա-

նիցս ետ մղեց թշնամու հարձակումները և հաղթեց թվաքանակով գերիշխող թշնամուն: Այլ կերպ չէր էլ կարող լինել. նրա խոսքով Արցախ աշխարհը արարվել է «Սասնա ծռերի լայն պարսատիկով շարտված բեկորից» և դարեր ի վեր դաժան բարբարոսների դեմ պայքարել է նախ՝ Մեսրոպատառ գրով, ապա՝ գեղեցիկ գրառով: Նրա հայրը՝ Սաքո քյոխվան, ժամանակի ճանաչված մարդկանցից էր, Շուշիի ենթաշրջանի 20 գյուղերի տանուտերը, որի հյուրընկալ օջախը յուրատեսակ իջևանատուն է եղել Շուշից, Պարսկաստանից, Թիֆլիսից եկած մեծամեծ հյուրերի համար: Բազմանդամ ընտանիքը, որտեղ ութ երեխա էր մեծանում, գերծ չէր հոգս ու կարիքից: Հետագայում նա հաճույքով էր վերհիշում իր մանկությունը, երբ կարկատած շալվարով ու տրեխներով իրենց զաններն էր արածեցնում հայրենի հանդերում՝ ուսից կախ մախաղում տանելով հացից անբաժան գիրքը: Թուժանյանն ասում էր, թե կարոտից է ծնվում ամեն վեհ բան կյանքում: Եվ հայրենական տնից հեռու իր ողջ գիտակցական կյանքն ապրած Վահան Հակոբյանը բազմաթիվ հուզիչ տողեր է ծոցնել արևախանձ ժայռերի գրկում ծվարած իր «քարե ավանին», անհոգ մանկության օրրանին.

*Կարո՛տ, ի՞նչ կարոտ, ի՞նչ անհա՛գ կարոտ,
Չու՛լվիր ժայռերին հայրենական տան,
Մեր փողոցներին ծուռ ու քարքարոտ,
Մեր գեփյուններին քնքու՛շ ու անձայն,
Մեր աղբյուրներին ջինջ ու սառնորակ,
Ի՞նչ ժողովրդի հոգուն անհատակ,
Չու՛լվիր ի՛ր, ի՞նչ կարոտ, ծու՛լվիր՝ որ ավանիս
Մարդուն, լեռներին ու հավերժացի ի՛ր:*
Ընկ. Վահանը գրի ու գրքի հանդեպ պաշտամունք ուներ: Նրա անհագ միտքը սնուցել են գրքերը: Ընթերցանությունը նրա համար զբաղմունք չէր և ոչ էլ ժամանց, այլ կենսական պահանջ: Ի պատիվ ուսուցչի՝ պետք է ասել, որ կարողացել է իր սաներին ևս վարակել ընթերցասիրության «ախտով»: Բարբախտություն է նման մանկավարժի մոտ ուսանել, որովհետև մանկատան յոթնամյակն ավարտած սաները գիտեին ոչ միայն Համեստի, Դանթեի, Շեքսպիրի, Գյոթեի և այլ հսկաների մասին, այլև ծանոթ էին Պլատոնի, Հեգելի, Կանտի փիլիսոփայությանը:

Դառնալով ընկ. Համեստին՝ ասենք, որ, հիրավի, նա այն բացառիկ անհատներից էր, որ ծնվել էր տեղին ու ժամանակին, որովհետև հենց նրա գոյությունը փրկություն եղավ մի ողջ սերնդի համար: Տիեզերքի պես խորն ու անպարագիծ նրա հոգում իր սաներից ամեն մեկն իր գահն ուներ: Նա մեկ առ մեկ գիտեր յուրաքանչյուրի բնավորությունը, թուլությունները, նախասիրություններն ու հակումները, գիտեր սիրով ամենատխուր պահերին, ուժ ու կորով ներշնչել հուսալքության ժամին, մի լուսաշող հայացքով ցրել նրանց տխրությունը՝ նեցուկ լինելով նրանց ամենադժվար իրավիճակներում: Իր բազմաթիվ աղջիկների համար մի իսկական մայր էր, որի կյանքն անցավ Ավարայրի տխրակի՝ Եղիշեի այս պատվիրանի ներքո. «Տվեք ինձ կիրթ մայրեր՝ ես ձեզ կտամ կիրթ ու խելացի հասարակություն»: Նրա հոգատար ծեռքի տակ աղջիկները մեծանում էին որպես տնայար տանտիրուհիներ՝ ծեռք բերելով ընտանեկան կյանքի համար անհրաժեշտ հմտություններ՝ եփել-թափելու, կարել-կարկատելու, ասեղնագործելու, թրուներ ու պահածոներ պատրաստելու և իրենց ապագա օջախներում հարմարավետություն ու ջերմություն ստեղծելու հազար ու մի ունակություններով: Սակայն նրա առաքելությունն այդքանով չէր սահմանափակ-

ԱՊԱԳԱ ՍՈՒՐԴՈՍԱՆԿԱՎԱՐԺ

ԴժՎԱՐԻՆ ԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏԵԿԱԾ ՄԱՐԴԿԱՆՆՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆՊԱՏԱԿՆ Է

Ուզում եմ ներկայացնել Մարտունու շրջանի ճարտար քաղաքի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի 2019-2020 ուստարվա շրջանավարտ Աստղիկ Ալավերդյանին:

Նա ծնվել է 2001թ. ապրիլի 26-ին, Դուզե ճարտարում: Ի ծնե Աստղիկը խուլ ու համր էր: Ծնողները դա նկատեցին, երբ լրացել էր նրա 4 տարին: Նրանք Աստղիկին տարան Ստեփանակերտի համրապետական հիվանդանոց, բայց համապատասխան մասնագետ չուներ հիվանդանոցը: Այստեղից էլ երեխային ուղարկում են Երևան: «Արաբկիր» բժշկական կենտրոնում հետազոտելով Աստղիկին՝ պարզում են, որ նա լսողության խնդիրներ ունի, ասում են, որ երեխայի հետ պիտի սուրդոմանկավարժ աշխատի՝ խոսակցական վերականգնելու համար: Այդ նպատակով Աստղիկի ծնողները 7-ամյա դստերը տեղափոխում են Երևան, որտեղ էլ նա սովորում և ավարտում է Ձեյթունի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցի 1-ին դասարանը: Դպրոցում Աստղիկը սովորում է ժեստերի լեզվի այբուբենը և «արտասանել» բառեր, հետո կամաց-կամաց՝ նախադասություններ: Դպրոցը մեծ տպավորություն թողեց Աստղիկի հիշողություններում: Նա խոստովանում է, որ այնտեղ է ինքը սովորել հաղթահարել դժվարությունները, ըմբռնունով մոտենալ մարդկանց ու խնդիրներին, նաև՝ ինչպես կյանքում առաջ շարժվել:

տարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցում և այն ավարտում 2019-2020 ուստարում՝ 12-ամյա կրթությամբ:

Պատրաստվում է ընդունվել Երևանի խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սուրդոմանկավարժություն ֆակուլտետը, որտեղ պիտի սովորի 4 տարի:



Աստղիկը դպրոցում լավ սովորող էր՝ հավաստիացնում են նրան դասավանդող ուսուցիչները: Բնույթով համեստ, կարգապահ, կարգ ու կանոն սիրող, միևնույն ժամանակ կենսուրախ աղջիկ է: Ազատ ժամանակ սիրում է նկարել, զբաղվել ընթերցանությամբ:

- Ես ոչնչով չէի տարբերվում մյուս աշակերտներից, առայսօր խնդիր չեմ ու-

նեցել համադասարանցիներին, ընկերներին և իմ շրջապատի հետ հարաբերություններում: Ուսուցչական և աշակերտական կոլեկտիվն ինձ հետ վերաբերվում է որպես նորմալ, լիարժեք մարդու: Նույնիսկ ընկերներին մի քանիսին սովորեցրել են ժեստերի լեզուն: Ուզում եմ, որ բոլորն անխտիր իմանան այն, ասում է Աստղիկը և նշում, որ իր սովորած դպրոցում կային մեծ խնդիրներով աշակերտներ, որոնց ինքն օգնում էր սեփական փորձով:

Աստղիկը տարիներ շարունակ լսողության ապարատ է կրում, ծանր լսողություն ունի և փոքր-ինչ դժվարությամբ է խոսում:



Մարդկանց խոսքը նա հիմնականում ընկալում է խոսողի շրթունքների շարժումներից: Նա ԼԴՅ խուլների միության անդամ է: Ի նշան աղջկա հանդեպ տածած հիացմունքի՝ վերջերս «ԼԴՅ խուլների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Բելա Գրիգորյանը Աստղիկին նվիրել է Վ.Խալաթյանի, Ջ.Մելիքյանի և ուրիշների հեղինակությամբ տպագրված «Խոսող ձեռքեր» հայկական ժեստերի լեզվի բառարան:

Նման խնդիրներով Աստղիկը միակն է Արցախից, որ պատրաստվում է սուրդոմանկավարժի կամ սուրդոթարգմանիչի մասնագիտություն ձեռք բերել: Հավատում է, որ կհասնի իր նպատակին: Նրա ամենամեծ երազանքը դժվարին կացության մեջ հայտնված մարդկանց աջակցելն է:

Աստղիկն ընտանիքի առաջնեկն է, ունի երկու եղբայր, մեկ քույր: Մայրը՝ Սևիլա Սարգսյանը, հավաստիացնում է, որ պատրաստ է դիմակայել ամեն դժվարության՝ ավագ դստեր երազանքն իրականություն դարձնելու համար:

Մասնագիտություն ձեռք բերելուց հետո Աստղիկը նպատակ ունի վերադառնալ Արցախ, կենտրոն հիմնել և զբաղվել լսողության և խոսելու խնդիրներ ունեցող երեխաների ուսուցմամբ:

Հաջողություններ ենք մաղթում Աստղիկին՝ գերազույն նպատակների իրականացման գործում և բոլոր բարի նախաձեռնություններում:

Արմինե ԴԱՆԻԵՆՅԱՆ
ք.Մարտունի

վում: Մայր արծվի նման իր ծագերի համար պատրաստ էր ինքնամոռաց պայքարի նետվել և երբեք չընկրկեց ոչ մի դժվարության առջև, երբ հարցը վերաբերում էր նաև նրանց ապագային:

Հատկանշական է, որ այն տարիներին Ադրբեջանի ղեկավարության հայատյացությունը չի շրջանցել նաև մանկատունը, որտեղ հայ երեխաների համար կրթությունը սահմանափակվում էր չորրորդ դասարանով, իսկ մյուս ազգերն ունեին լրիվ միջնակարգ և թերի միջնակարգ դասարաններ: Դա նշանակում էր, որ մեր երեխաները պետք է կրկնեին 4-րդ դասարանի դասընթացն այնքան, մինչև դառնային 15 տարեկան, որից հետո նրանց ուղարկում էին Կիրովաբադ կամ այլուր՝ գործարաններում աշխատելու: Ինչքան էլ ընկ. Համեստը բողոքներով ու նամակներով դիմում էր պատկան մարմիններին՝ ոչ մի արդյունք. «Ձայն բարբառոյ յանապատի»: Հուշի այս պատահիկը խոսում վկան է այն տարիների դաժան իրականության. «Առաջին ավարտածներին՝ տասնհինգ տարեկան Լուսիկին, Յուլիային և ինձ վեց հոգու հետ ուղարկեցին: Մի քանի ամսից հետո նրանք արդեն թուրքերի ձեռքին են՝ ազգանունները փոխած և թուրքացրած: Ի՞նչ անեի, ոչնչով օգնել չէի կարողանում, ես ու ամուսինս տանջվում էինք, մեզ չէին լսում, ուղարկեցինք և երկրորդ շրջանավարտներին՝ այսպես կոչված: Սպասվում է երրորդ ավարտածներին նույնը, էլ համբերելու տեղ չկար: Ամռան մի օր, երբ կարճ ժամանակ էր մնացել երրորդ խումբս տանելու, կանչեցի ինձ մոտ չորրորդ դասարանի գերազանցիկ աշակերտուհի Արզունյանին Եվգենյային, նստեցրի ու թելադրեցի նամակը Բաբու և պատճենը՝ Մոսկվա, ստորագրեց Եվգենյան. այն գրված էր երեխաների անունից: Անցան օրեր, մանկատունը չգիտի մեր այդ գաղտնիքը, և ահա երեխաներս ուրախա-

ցած ճիչերով վազում էին դեպի մեր տուն ու հայտնեցին, որ հրաման է եկել Հաջիբեկում, դա մեր բնակավայրն էր, բացել թերի միջնակարգ դպրոց: Այդ օրն ինչպե՞ս կարելի էր մոռանալ. մենք երեխաների հետ ուրախությունից արտասվում էինք... Եվս մի ուշագրավ հանգամանք. հայ երեխաները լավ էին սովորում, հարյուր տոկոս առաջադիմություն ունեին, իսկ կեսից ավելին գերազանց ու հարվածային էին: Մանկատան թուրք տնօրենը նույնիսկ չէր փորձում թաքցնել իր նախանձն ու չարակամությունը, և աղջիկների ականջին հաճախ էր հասնում աղբյուրազանակա խմբի երեխաներին ուղղված նրա նախատիքը. «Էս անպետք հայերին ինչքան ուզում եմ վատ նայել, դարձյալ նրանք ձեզանից առաջ են ընկնում»:

Անգնահատելի է այս հայուհու ավանդը իր ոչ սովորական ճակատագրով սաների ապագան բառիս բուն իմաստով կերտելու գործում: Բանաստեղծը կասեր. «Թե այնտեղ է լոկ սխարանքն սկսվում, ուր վերջանում է ամեն մի հմար»... Այն, ինչ արեց Համեստ Ավագյանն իր աղջիկների համար, հիրավի սխարանք էր: Երբ աղջիկների առաջին խումբը, որի կազմում էր նաև նամակը գրած գերազանցիկ սանուհին՝ Եվգենյան, ավարտեց յոթնամյակը, դաստիարակչուհին նրանց տարավ Ստեփանակերտ, տեղավորեց բժշկական ուսումնարանում, որի տնօրենը երջանկահիշատակ բժշկուհի Թամարա Քամալյանն էր: Վերջինս գրկաբաց ընդունեց աղջիկներին՝ իր հերթին հարազատ մոր պես հոգ տանելով նրանց: Իսկ արձակուրդներին նրանց հետ էր ուղարկում Հաջիբեկ, որպեսզի իրենց կարոտն առնեին ուսուցիչներից, որոնց սիրում ու հարգում էին ծնողների պես: Եվ այդպես հաջորդաբար, ամեն տարի նա իր սաներին բերում էր Ստեփանակերտ, միջնորդում, որ ընդունվեն բժշկական, հետագայում նաև՝ գյու-

ղատնտեսական ուսումնարան: Եվ ինչպես ինքն է գրում իր հուշերում, «Ես զգացի, որ իմ երեխաները իրենց տեղը գտան իրենց հայրենիքում՝ Ղարաբաղում: Մեծացան այնտեղ, բոլորն էլ տեղավորվեցին, օգտակար եղան իրենց ժողովրդին: Իհարկե, ես նրանց շատ եմ կարոտում ու սպասում եմ նրանց հետ հանդիպելու»: Իսկ հանդիպումները վերածվում էին տոնի:

Հետագայում նրանց ընտանիքը տեղափոխվեց և մշտական բնակություն հաստատեց Երևանում: Համեստ Ավագյանը շարունակեց մանկավարժի աշխատանքը՝ այս անգամ որպես մանկապարտեզի դաստիարակչուհի: Նրա գործվագութ ու հմայիչ կերպարն այսօր էլ ուղեկցում է հարյուր-հազարավոր սաներին, որոնց բախտ է վիճակվել վայելել նրա հոգու ջերմությունն ու խանդաղատանքը: Ամառները սովորաբար ընտանիքով այցելում էին Արցախ: Ամեն անգամ Ստեփանակերտ գալով՝ հանդիպում էր արդեն տուն ու ընտանիք կազմած իր աղջիկների հետ, հյուրընկալվում նրանց օջախներում՝ մայրական անսպառ սիրուց ու գործկանքից բաժին հանելով նաև նրանց երեխաներին, որոնցից մեկն էլ տողերիս հեղինակն է: Մինչև երկրային կյանքի ավարտը իր ուսուցիչների հանդեպ պաշտամունքը պահպանած մայրս՝ Եվգենյա Արզունյանյանը, իր սերն ու հարգանքը կարողացել է փոխանցել զավակներին: Հաճախակի, հատկապես տոն օրերին, զանգում էր, հետաքրքրվում նրանց ողջությամբ, ընտանիքով ու զավակներով, բաց չէր թողնում հանդիպման ոչ մի առիթ:

...Տարիներ առաջ էր, գործերով Երևան պիտի գնայի, մորս հարցրի, թե ինչ կուզեմար, որ իր համար բերեի: Տալով իր ուսուցիչների հասցեն՝ նա միայն մի բան խնդրեց՝ այցելել ոտքի կոտրվածքի պատճառով անկողնում գամված ընկ.

Համեստին և մի լուր բերել իրեն... Ամեն անգամ այդ հանդիպումը հիշելիս հոգիս լցվում է անմեկնելի զգացումներով: Հարազատի սիրով ու գործվանքով նա ընդունեց ինձ՝ նոր լուսի ներքո երևակելով մորս տեսակն ու ապրած կյանքը: Հրաժեշտի ժամանակ, երբ անհարմար էի զգում ընդունել նրա նվերները, ասաց, որ վայել չէ առաջին անգամ տատին այցի եկած ավագ թռռանը առանց նվերի ծամփու դնել՝ դրանով իսկ հաստատելով հոգևոր արյունակցությունն իր սաների հետ:

Իսկ ընկ. Համեստի ազգականների պատմածները գունեղ վրձնահարվածներ են նրա դիմանկարին: Կյանքի վերջին տարիներին անկողնում գամված իրենց հարազատի սիրտը տնեցիներն ուզում էին ամեն կերպ շահել և երբ հարցրին, թե սիրտն ինչ է ուզում, զարմացան... Մայրական սիրտը կարոտել էր իր սիրելի Եվգենյային՝ այն գերազանցիկ սանուհուն, որի հետ նամակ էին գրել խորհուրդների երկրի ղեկավար Ստալինին... Տնեցիները հեռախոսով կապվեցին, ժամից ավելի գրուցում էին, ասելիքը չէր սպառվում, կարոտը չէր հազնում: Նրանց անվերջանալի գրույցը հիմա շարունակվում է երկնքում...

Համեստ Ավագյանը կյանքից հեռացավ 2008թ.՝ իր չքնաղ Գետաշենի հայաթափման կսկիծը սրտում, բայց աներեր հավատով, որ հայոց քաջերը մի օր Շահունյանով Գետաշեն կհասնեն: Մինչև վերջ նա հոգով ու սրտով իր սաների հետ էր, որոնք փոխադարձում էին բազմապատիկ սիրով ու հարգանքով: Եվ ժամանակն ու տարածությունը նահանջեցում են այդ մեծ սիրո առջև... Հազար խոնարհում ու ծնրադիր խնկարկում լուսե հիշատակիդ, Մեծ Հայուհի և Մեծ Մայր...

Մելանյա ՄԻՆՈՆՅԱՆ

ՍԱՐՁԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ՀԱՅԵՆԻ ԶԲԱՂՍՈՒՆՔ

Ճապոնական իմաստախոսությունն ասում է, որ թուրք պետք է մշտապես կրել, եթե անգամ այն պետք զա կյանքում մեկ անգամ: Իսկ ճապոնական մարտարվեստի մարզի հետ ունեցած զրույցի ընթացքում պարզաբանեցինք, որ ինքնապաշտպանությանը զբաղվել անհրաժեշտ է, թեկուզ այն ոչ միշտ կարող է պետք գալ:



Արցախի ավանդական կարատե-դո ֆեդերացիայի կարատեի մարզիչ Տիգրան ԳԵՎՈՐԳՅԱՆԸ համձն է առել առանձին խմբում ինքնապաշտպանություն սովորելու պարապմունքներ անցկացնել: Արցախում հայտնի չեն այդպիսի խմբակներ: Տիգրան Գեորգյանը թերեւս առաջին մարզիչն է Արցախում, որը նախաձեռնել է մարտարվեստում ունեցած գիտելիքներն ի նպաստ դնել քաղաքացիներին ինքնապաշտպանություն դասավանդելու գործին: Թե ինչով է դա պայմանավորված՝ պարզաբանեցինք նրա հետ անմիջական զրույցի ընթացքում:

- Տիգրան, ինչո՞վ է պայմանավորված ինքնապաշտպանության պարապմունքներ անցկացնելու Ձեր նախաձեռնությունը:

- Նախաձեռնությունս պայմանավորված է ավելի շատ հասարակության պահանջի հետ: Լինելով կարատեի մարզիչ՝ ընդունելության համար դիմումներ են ստանում ոչ միայն բուն մարտարվեստ սովորել ցանկացողներից, այլև այն քաղաքացիներից, ովքեր նախընտրում են ինքնապաշտպանություն սովորել ոչ թե որևէ կոնկրետ մարզաձևի շրջանակում, այլ առանձին պարապմունքներում: Նշեմ, որ մարտարվեստները չենք տարանջատում ինքնապաշտպանությունից, բայց ընդհանրապես դիմորդների խնդրանքին՝ պարապմունքներն անց են կացվում հատուկ մշակված ծրագրով, այսինքն՝ պարապմունքի սխեմայով, որը տարբերվում է մարտարվեստի պարապմունքից:

- Կարո՞ղ եք պարզաբանել, թե ինչու՞մ է տարբերությունը:

- Եթե սպորտում գործ ենք ունենում մարզիկների մեջ մրցակցության ոգի սերմանելու եւ չենսպիռնի տիտղոսին հասցնելու ու տիտղոսը պահելու հետ, իսկ բուն մարտարվեստով զբաղվողների դեպքում ինքնաճանաչման եւ ինքնակատարելագործման սկզբունքներին ենք առաջնահերթություն տալիս, ապա ինքն իրեն պաշտպանելու կարողություն ձեռք բերել ցանկացող մարդու հետ ավելի շատ աշխատում ենք նրա հոգեբանական կոփվածքի վրա: Մեծ դեր ունեն մարզիչ պատրաստվածությունը, նրա գիտելիքներն ու փորձը: Այն մեթոդները, որոնք են օգտագործում են դասավանդելու ժամանակ, ձեռք են բերվել բացառապես իմ երկար

տարիների պարապմունքների շնորհիվ, որոնք ներառում են ֆիզիկական, տեխնիկական, փիլիսոփայական եւ մեղիտատիվ պրակտիկաներ: Մարզիկի հետ հոգեբանորեն արդյունավետ աշխատելն անհնար կլիներ առանց մարտարվեստի շնորհիվ ձեռք բերած գիտելիքների հիմքի: Իսկ այն մարզիկ, ովքեր ուզում են արդյունավետ պաշտպանվելու, սառը գեներից եւ այլ առարկաներից պաշտպանվելու կարողություն ունենալ, միաժամանակ պետք է կոփվեն հոգեբանորեն:

- Ովքե՞ր կարող են դիմել ինքնապաշտպանության պարապմունքների մասնակցելու համար:

- Ինչպես կարատեի պարապմունքները, այնպես էլ ինքնապաշտպանության խումբը բաց է բոլորի համար: Կարող են դիմել ինչպես հասուն տարիքի մարդիկ, այնպես էլ երեխաներ: Բոլոր դիմորդների հետ անհատական զրույց են ունենում՝ պարզելու համար, թե ինչ նպատակով են ուզում ինքնապաշտպանություն սովորել: Եթե պարապմունքի սկզբունքներին ոչ մի հակասող բան չկա, ուրեմն դիմորդն ընդունված է:

- Ի՞նչ է ձեռք բերում ինքնապաշտպանությանը զբաղվող քաղաքացին: Արդյո՞ք Արցախի բնակիչներն իրենց պաշտպանված չգզալու առիթ ունեն եւ ըստ այդմ՝ պարապմունքների հաճախելու կարիք:

- Ինքնապաշտպանությունը միայն պաշտպանվելը չէ: Բացի ֆիզիկական հնարներից պարապող ձեռք է բերում տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ընդունակություն, դառնում է ինքնավստահ: Դա նշանակում է, որ պարապող ոչ թե սովորում է պայքարել միայն իր վրա հարձակվողների դեմ, այլ, ընդհանուր առմամբ, ձեռք է

բերում հոգեբանական առունով նոր որակ ու մտածելակերպ. իրեն անպաշտպան զգացող մարդուց դառնում է իրեն պաշտպանել կարողացող, ինքնավստահ մարդ: Գիտակցության այդ նոր մոդելը թույլ է տալիս նրան ձեռքագտնել բարդություններից, արագ կողմնորոշվել եւ արդյունավետ որոշումներ կայացնել կյանքի տարբեր ոլորտներում: Չեն կարող բոլորի փոխարեն պատասխանել, բայց արցախցիներն ուժեղ են ոգով եւ ֆիզիկապես: Այնուամենայնիվ, որքան ուժեղ լինի մարդ, նրանից ուժեղն էլ կգտնվի: Մեզանից յուրաքանչյուրն ապահովագրված չէ վտանգավոր իրադրություններում հայտնվելուց, վատ շրջապատ ընկնելուց, առողջությունն ու կյանքին վնաս սպառնացող պոտենցիալ մարդկանցից: Ինքնապաշտպանության պարապմունքների հաճախող մարդկանց առավելությունն այն է, որ նրանք գիտեն ինչպես պահել իրենց մեծ իրավիճակներում: Ուրեմն, այդ հմտություններն անհրաժեշտ են բոլորին:

- Դավանաբար մեր ընթերցողների մոտ հարց կառաջանա, թե արդյո՞ք արժե ժամանակ, էներգիա, ֆինանսական միջոցներ տրամադրել որեւէ հմտություն ձեռք բերելու համար, որը կարող է նաեւ պետք չգալ: Ի՞նչ կպատասխանեիք:

- Այդ հարցին հարցով կպատասխանեմ. իսկ եթե պետք գա՞: Քիչ չեն այն դեպքերը, երբ հասարակ քաղաքացին ստիպված է պաշտպանվել կամ պաշտպանել իր հարազատներին, օրինակ, ալկոհոլը չարաշահող մարդու ոչ աղեկվատ պահվածքից: Դա՞ օրինակի համար: Իսկ հետաքրքրվողներին խորհուրդ են տալիս այցելել պարապմունքի, իհարկե՝ համավարակի ավարտից հետո, անձամբ ծանոթանալ մթնոլորտին եւ եզրակացնել. արժե՞ շարունակել, թե՞ ոչ: Ավելացնեմ նաեւ, որ ինքնապաշտպանության պարապմունքը միայն պաշտպանվելու հմտություն ձեռք բերելը չէ, դա նաեւ համախոհների խումբ է, որտեղ ամեն ինչ հիմնված է փոխադարձ հարգանքի վրա, եւ որտեղ կարելի է ինքնադրսեւորվել, դրանք հաճելի եւ նպատակային զրույցներ են մարզիչ-մարզիկ փոխհարաբերության շրջանակում, դա առողջ ապրելակերպ է՝ ֆիզիկական եւ հոգեբանական կոփվածքով, ի վերջո, դա հաճելի զբաղմունք է, որը նաեւ օգտակար ու անհրաժեշտ է:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Բորիկ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



Արարի՛ր ինձ, Բանաստեղծություն...
Հունցի՛ր ինձ քո մեջ...
Արարի՛ր Բառիդ ամուր ոսկրերից...
Ուզում եմ դառնալ քո մի մասնիկը,
Դառնալ տառեղեն,
Բառե մի շինվածք...
Բանաստեղծություն, ինձ կյանքով լցրու...

Օրինի՛ր ինձ, Բանաստեղծություն...
Ես պատրաստ եմ քո խաչը լուսավոր Կրել հավիտյան մատներին վրա:

Գրկի՛ր ինձ, Բանաստեղծություն...
Թներդ պարզի՛ր, գրկի՛ր մերկ հոգիս:
Ծածկի՛ր մարմինս վերմակով քո տաք:
Պաշտպանի՛ր Դու ինձ:
Տես, մղորվել եմ այս ցուրտ աշխարհի կեռ բավիղներում:

Օգնի՛ր ինձ, Բանաստեղծություն...
Օգնի՛ր ինձ հասնել դառն շեմին
Ու խոնարհաբար քո տան պատերը համբուրել լռին...

Ների՛ր ինձ, Բանաստեղծություն...
Ների՛ր՝ քեզ հաճախ առանց թույլտվության,
Առանց հարդարման, առանց խնամքի
Հանրության դատին հանձնելուս համար:

Գթա՛ ինձ, Բանաստեղծություն:
Թող ձուլվեմ Բառիդ...
Ջրկի՛ր ամենից ու ամեն ինչից, բայց քեզանից՝ երբեք:
Ջրկվել քեզանից, մույ՛նն է՝ ինչ ապրել կյանքս հետագա
Ինքս առանց ինձ, խռով ինձանից:

Արտագրի՛ր ինձ, Բանաստեղծություն...
Արտագրի՛ր կյանքից...
Սրբագրի՛ր, խմբագրի՛ր, գրի՛ր ինձ,
Բանաստեղծություն...
Գրի՛ր ինձ սրտիդ զարկերի վրա, բաբախյունի մեջ:
Դարձրո՛ւ ինձ հավերժ քո հպատակը.
Թո՛ղ քեզ ծառայեմ, լինեմ ճորտը քո:

Բանաստեղծություն, իմ տերը դարձիր:
Կնքի՛ր ինձ, Բանաստեղծություն:
Մաքրագործի՛ր հոգիս, մարմինս հողե:

Բանաստեղծություն, լցվի՛ր հոգուս մեջ, դաջվի՛ր ափերիս...
Բառե մատանիդ պատրաստ եմ կրել ընդմիշտ մատներիս...

ՊԱՐՈՆ ԱՇՈՏԸ

(Հիշատակ ուսուցիչի)

Ստնելիս խորը սև փոս էր թվում. դաշնամուր կար, երկար նստարան, սեղան՝ պատուհանի դիմաց, սիրուն տեսարանով. մեր Հոշանցն էր երևում: Դասասենյակ մտնելուց հետո առաջին հարցն այն էր՝ պարապե՞լ եմ, թե՞ ոչ: Բնականաբար ասում էի՝ այո, բնականաբար սուտս պարզ երևում էր: Շատ էի ջղայնանում, որ շաբաթվա երկու օրը նկարչության չափեր է գնայի, դաշնամուրի դաս ունեի: Չէի պարապում, դասի գնալուց առաջ կես ժամ նվագում էի, իբր թե սովորել եմ, ու դժոխք էր այդ կես ժամը:

Պարոն Աշոտն ասում էր, որ ինձանից լավ դաշնակահար դուրս կգար, հիմա չգիտեմ իսկապես ճի՞շտ էր ասում, թե՞ փորձում էր մոտիվացնել, ափսոս, երբեք էլ չեմ կարող իմանալ՝ ինչ էր մտածում: Նեղվում էր շատ ժամանակ, որ գեղանկարչությունը նախընտրում էի

երաժշտությունից (արվեստագետի խանդ էր երկի): Շատ էր ջղայնանում, ամեն անգամ ասում էր.

- Ձեր տանը որ խնջույք լինի, մոլբերտները բերելու եք դնեք, սկսեք նկարել, չէ՞, պետք անվագեք, ուրախանաք, պարեք: Կամ էլ.

- Աստված տա՛ չնեռնեմ, գալու եմ հարսանիքիդ խայտառակ անեմ քեզ, բոլորին կասեմ, որ չէիք պարապում:

- Դե հարսանիքս դեռ չի եղել, պարոն Աշոտն էլ, ցավոք, չի գա խայտառակելու: Հինգ տարի իրար հետ կռվելով՝ որոշակի բանի հասանք: Հերթական քննության ժամանակ ասել էին, որ ես սկսել եմ երաժշտության հետ ճոճվել՝ փայտի նման չեմ նստում նվագելիս. աշխարհով մեկ էինք եղել համ ես, համ ինքը: Դպրոցում միշտ ուշադիր էր իմ հանդեպ, մի քանի անգամ էլ տնօրենի մոտ է

տարել. դասարանցիներիս էի ծեծել, մի անգամ էլ դասարանցուս ակնոցն էի ջարդել, մատս էլ տեղից դուրս էր եկել (բախտս բերել էր քիմիայից թեստային պետք է գրեի՞նք): Պապային հենց տեսնում էր՝ իմ հերթական չարությունն էր նկարագրում.

- Մեկ էլ տեսնեմ Անահիտը իրենից երկու անգամ բոյով աղջկա ծեծում ա,- ու խնդում էր: Տեսնե ի՞նչն էր նրան դուր եկել: Մի անգամ էլ շատ էր նեղվել, երբ տեսել էր՝ հենց երեկ գնած կոշիկներս ցեխի մեջ կորել էին: Յոթերորդ դասարանում էի սովորում, արդեն ասել էի, որ դուրս եմ գալու, արհեստավարժ նկարչություն եմ ուզում սովորել: Չեմ հիշում դեմքի արտահայտությունը, բայց հիշում եմ, որ հպարտ էր:

Ինքն այդպես էլ հպարտ մնաց իմ հիշողության մեջ, դասասենյակն էլ սև փոսից մուգ

կապույտ անծայրածիր տիեզերքի վերափոխվեց՝ երաժշտության հանգույն: Շատ եմ կարոտում: Հաճախ է մտքերումս հայտնվում: Ամեն անգամ նկարչության ոլորտում փոքր հաջողության հասնելիս ինքն աչքիս առաջ է գալիս: Հիմա մեծ ցանկություն կա նորից դաշնամուր նվագելու, երաժշտությամբ զբաղվելու: Ցանկությունս նկարելով եմ բավարարում, երաժշտական թեմաները հարագատ եմ:

Պարոն Աշոտ եղիագարյանի մահվան լուրը դպրոցի ուսուցիչների ու աշակերտների համար շատ ցավալի էր: Բոլորը սիրում էին նրան: Բայց նրանց «բախտը չի բերել». հարսանիքի ժամանակ խայտառակվելու մտքից չէին սարսափել:

Անահիտ ԸՈՔՈՅԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԿՏԻ ՀԻՇԱՐԺԱՆ ՕՐԵՐԻՑ

Սկիզբը՝ «Լուսարարի» հ. հ. 6-16-ում

ժողովրդական առածն ասում է. «Չկա չափիք առանց բարիքի»: Սա է փաստում մեր 3-րդ հարկի խուցը, որը հենց ինքը չարիքն է: Հիմա ես չպիտի մտնեմ ու բացատրեմ, թե ինչու չարիքն է: Դա պարզ է. լավ տեղ չէ, մանավանդ կտրված ես մարդկությունից: Գիշտ է, ինքը չարիք չի ծնում, բայց երբ մեր կյանքը կապում ես առածի հետ, չարիքը հենց դա է որ կա: Իսկ ո՞րն է բարիքը: Դա է հենց իմ գրելու դրդապատճառը:

Երբ նկատում էինք, որ բան չկա անելու, գիրք կարդալուց հոգնեցինք, մի հետաքրքիր խաղ չկա խաղալու, հույսներս դնում էինք միջանցքի բաց սենյակների վրա. մտնում էինք այնպես, ինչպես պիտի մտնեք մեկը թալանված մի տուն: Գիշտ է, թալանվելիք բան չկար այնտեղ. չոր պատեր էին չորս կողմը, դատարկ ու սին պահարաններ, ինչպես նաև նույն բախտին արժանացած դարակներ, կեղտոտ վարագույրներ, մաքրուհու երես չտեսած ապակիներ և անասելի քանակությամբ փոշի ուր աչքը տեսնի՝ սեղան, գետին, դարակ-պահարան, լվացարան ու ամեն մի պուճախ: Սակայն մի բան կար, որ մեզ գրավում էր դեպի այդ սարսափելի սենյակները: Դա, ավելի ճիշտ՝ դրանք, քանի որ դրանք մի հատ, երկու հատ չէին, էլեկտրական լամպերն ու սարքավորումներն էին, որ մեզ քաշում էին այդ սենյակները: Բայց ինչո՞ւ էին դրանք մեզ պետք ու այդքան օգտակար: Բանն այն է, որ մեր առաջին հարկի սենյակներում հաճախ այդպիսի բաների կարիք է լինում՝ ինչպես էլեկտրական լամպը ջարդվել է, կամ հավելյալ լույսի աղբյուր է հարկավոր: Սրանք կարելի է լինում բավարարել դպրոցի կողմից, եթե խնդրես: Բայց դպրոցը ամեն վայրկյան հո՞ք չո մասին չի մտածում. կամ մոռանում է տեղադրել, կամ հրաժարվում է՝ պատճառաբանելով նյութական պակասությունը: Դրա համար էլ, երբ առիթը, ինչպիսին այս մեկն է՝ երրորդ հարկի սենյակները, ներկայանում է, աշխատում ենք բաց չթողնել:



Ու այսպես ամեն օր. երբ հոգնում էի գիրք կարդալուց կամ անգործ պառկելուց, դուրս էի ելնում միջանցք, և անպայման մի գործ ճարվում էր. սկսած որևէ բան վերանորոգելուց մինչև մի բան ջարդելը ամենը գործ էր, ամող էր պետք: Երկու ամող էլ կային... նույնիսկ մեջի փոքր վարպետ էր վերջինիս մեջ...

Մի օր ահա թե ինչ պատահեց: Դա կապ չունեմ մեր օրվա քաջագործությունների հետ: Այդ օրը մի նշանավոր բան չէի արել, որ մի բան պատահեք: Բանն ահա ինչ չունեմ էր:

Ընթրիքը վերջացրել էինք, և նստած գիրք էի կարդում սիրած աթոռին, որը բազմաթիվ չէր որ ասեմ, բայց հասարակ աթոռ էլ չէր: Նման էր մեքենայի փափուկ նստարանին և բազուկները փայտե, գույնը՝ սև:

Ուրեմն գիրք էի կարդում, երբ լսեցի գլխավոր դարպասի, այն երկաթե ցանցադռան (ճիշտն ասած, չգիտեմ, թե ինչպես անվանեն. մենք ռուշոտկա ենք անվանում) բացվելը: Դա ինչ-որ մի գարնանալի բան էր. բուժքույրը էլ չի գա, վերջին մեր հանդիպումը լինում է ընթրիք բերելը: Բայց կարող էր լինել պարոն Արայիկը, որ գար սենյակը:

Այս էինք մտածում, երբ մեր դուռը բացվեց, և երևաց պարոն Արայիկը մի տղայի հետ: Տղայի դեմքին մի քանի բշտիկներ կային: Իսկույն ճանաչեցինք. առաջին հարկի Լարրին էր՝ լիբանանահայ մի տղա՝ մեր բախտին արժանացած:

Մեր սենյակում դարձանք երեք հոգի՝ մախանձելի մի սենյակ երեք սենյակակիցներովս: Առօրյան կամաց-կամաց սկսեց փոխվել ու ավելի հետաքրքիր դառնալ: Սենյակի մթնոլորտը ծանրից վերափոխվեց ուրախի:

Լարրիի ժամանումը եղավ իմ գալու 3-րդ օրը, հետևաբար նա դեռ 3 օր ավելի պիտի մնար, երբ մենք թողնեինք: Նա էլ սա գիտակցում էր և դարդ անում դրա համար. ինչպե՞ս պիտի մնար 3 օր մենակ: Բայց նրա բախտը բերեց: Սակայն սրա մասին մի քիչ հետո, քանի որ դա հարկ պիտի լինի նշելու վերջում:

Այսօր առավոտյան Սիմոնը, որ կամաց-կամաց ազատվում էր վերքերից, պիտի իջներ 3-րդ հարկից և զնար սենյակ՝ այլևս ազատ ու անկախ: Ի՞նչ ուրախ էր: Այդ օրը սովորականից շուտ արթնացավ և անհամբեր սպասում էր բուժքույրին, որ գար ու կարգադրեր ամեն ինչ: Պատուհանից ում տեսնում էր, հայտարարում էր իր ցած իջնելու լուրը: Այդ, շատ ուրախ էր նա այդ օրը:

Ու կեն երկարացնում, թե ինչպես բուժքույ-

րը եկավ, երբ Սիմոնը իրենցը հավաքել ու դասավորել էր՝ պատրաստ իջնելու, և մեզ նախաճաշ բերեց: Իսկ Սիմոնին հետը տարավ՝ մեզ երկուսին միասին ձգելով: Մնացինք ես ու Լարրին: Գիշտն ասած, ուրախ էինք զգում, որ Սիմոնը զնացել էր. այնքան չարածի էր ու չէր սիրում տեղը նստել: Անպայման մի անկարգություն պիտի աներ: Մենք էլ, իմանալով, որ նա չկա այլևս, թեթևացած էինք զգում: «Օ՛հ, ասում էինք մենք,- զնաց վերջացապես. ինչե՞ր չէր անում սենյակի մեջ. «մատրասները» փռում էր հատակին (երրորդ հարկում բավական «մատրասներ» կային, բայց ոչ փոշոտ սենյակներում, այլ մի քանի մաքուրներում) և մի «մարգագետին» սարքում՝ վրան թավալվելու համար: Կամ էլ հակառակը. իրար վրա էր դարսում և մի բարձր աշտարակ սարքում ու հետո վրան ցատկոտում և ուզածիդ չափ փոշի հանում: Սա, իհարկե, դուրեկան չէր մեզ, և մենք հանդիմանում էինք նրան ամեն մի անկարգություն անելիս: Իսկ եթե չէր ենթարկվում, կամաց այնպես էինք խփում, որ ստիպված հնազանդվում էր:

Լարրիի հետ ավելի հետաքրքիր էր անցնում ժամանակը: Քիչ թե շատ խաղեր կարողանում էինք կազմակերպել և ժամանակ անցկացնել: Մեծամասնությամբ բառախաղեր էինք խաղում՝ թուղթ օգտագործելով: Ու քանի որ Լարրին հայերեն լավ չգիտեր, ու բառապաշարը աղքատ էր, ստիպված էի անգլերեն խաղալ, որին նա ավելի լավ էր տիրապետում, քան հայերենին:

Ինչ որ է, բայց, համենայն դեպս, նորից գիրքն էր մնում ժամանակ վատնելու լավագույն միջոցը:

Իսկ Լարրիին տալիս էի իմ անգլերենով «Շերլոկ Յոլմսի դեկադները» (եթե լավ ես հետևել նախորդ դեպքերին, ապա կհիշես իմ էքս անգլերենի ուսուցչուհուն: Երբ ես գնացի նրանց տուն որպես հյուր, նա ինձ նվիրեց այդ գիրքը՝ նախօրոք իմանալով, որ սիրում եմ Շ.Յոլմսի արկածները), որը, պարզվեց, հետաքրքրական դուրս եկավ նրա համար: Բայց երևում էր, որ հակում չունի դեպի ընթերցանությունը: Դա պարզ հասկանում էի, երբ նա, ծանծրանալով կարդալ մի քանի պատմություններ, հարցնում էր ինձանից, և ես պատմում էի (գրքի մեծ մասը կարդացել էի մինչ այդ), ինքն էլ լսում էր, և երբ կարդալու պահին էր գալիս, վազ էր անցնում պատմածս պատմությունները և մյուսներին անցնում: Ու այսպես շարունակ. երբ մի պատմությունը դուրը չէր գալիս, ես էի պատմում:

Բայց ուրիշ էի ես: Կարդում էի պատմություն պատմության հետևից: Միաժամանակ կարդում էի, ինչպես նշեցի սկզբում, պատմական, արկածային և Ձորյանի երկերը՝ հատորներով: Բոլորն էլ հետաքրքրական էին՝ ըստ թեմաների: Պատմականը «Վարդանանք»-ն էր, որն ընթերցելիս ուշադրություն էի դարձնում ոչ թե նյութին, այլ գրողի՝ Դ. Դեմիրճյանի գրելու ձևին: Պատմականը որպես հետաքրքրական գիրք էի կարդում՝ նկատի առնելով միայն դեպքերի ընթացքը: Իսկ Ձորյանի երկերը՝ որպես համբավավոր գրողի աշխատանք: Դուրս էր գալիս հատկապես նրա գրելու ձևը. պարզ, թափանցելի և զարմանալիորեն հետաքրքրական: Դեռևս ծանոթ չէի մյուս հայ վաստակավոր գրագետներին, բայց Ձորյանը իսկապես որ ամենամեծն էր բոլոր գրողների մեջ: Բայց վերադառնանք բուն նյութին:

Մի քիչ հուճկոտ տղա էր Լարրին: Միշտ զվարթ գրույցներ ու կատակներ էր անում: Թերևս սա էր գլխավոր պատճառը, որ ժամանակն արագ և ուրախ էր անցնում: Իրիկնամուտներին, երբ աշակերտությունը գոհացած դուրս էր գալիս ճաշարանից և մաքուր օդ չունում մինչև սերտողության սկիզբը, որ պիտի սկսեր ժամացույցի մեծ սլաքի կես շրջան կատարելուց, մենք՝ ես ու Լարրին, դուրս էինք մայրում պատուհանից և ուշադիր հետևում ամեն մեկի շարժումներին, և երբ մեկը մի ծի-

ծաղելի բան էր անում, խնդում էինք ու հետո երևակայական բաներ հորինում այդ անծերի վրա: «Կը պատկերացնե՞ս, Լարրի...», խնդում էինք ասածների վրա:

Մի քիչ էլ հետաքրքրական անծնավորություն էր սենյակակիցս: Միշտ մտածում էր ջերմաչափի սնդիկի վրա, թե ինչպես ձեռք բերել այն: Ասում էր. «Ինչ լավ բան է մերքուրին (անգլերեն սնդիկին mercury են ասում): Սեղանին վրա դնես և խաղաս: Sguerre ընես նե՛ մանր կտրոններու կը վերածուի»: Ես հասկանում էի, որ նա ճգնելու մասին էր խոսում: Բայց գիտեի, որ սնդիկ ճգնելը խելքին մոտիկ բան չէ, բայց չէի առարկում:

Որպես փակագիծ ասեմ (մոռացել էի), որ Լարրին մեր դասարանում էր:

Մի օր մի հետաքրքիր բան պատահեց: Երբ Լարրին ջերմաչափը հանել էր, որ ջերմությունը ստուգեր (յուրաքանչյուրս մեկական ջերմաչափ ունեինք), ինչպես պատահեց... ջարդվեց, և սնդիկը թափվեց սեղանին: Մի կողմից ուրախացավ, մյուս կողմից վախեցավ. ի՞նչ պիտի պատասխաներ բուժքույրին: Բայց շատ մտահոգիչ չէր հարցը, և մենք նստեցինք, կիսեցինք սնդիկը, և յուրաքանչյուրս իր համար սկսեց խաղալ:

Յետո Լարրին երբ հիշում էր սնդիկը և կտրված ջերմաչափը, ասում էր առանց որևէ նախաբանի.

- Կտրվեցավ:
- Մի վախմար, բան մը պիտի չընես սիստրը,- ասում էի ես «սեստրա» բառի փոխարեն սիստր ասելով: Նա այդպես էլ կոչում էր բուժքույրին՝ առանց իմաստը հասկանալու:
- Չեմ վախմար,- ասում էր նա ծիծաղելով,- բայց... կտրվեցավ:

Ես ծիծաղում էի և մտածում. «Սրտին ցավ է պատճառում, որ նյութական վնաս է հասցնում բուժքույրին»:

Ու այս մտահոգությամբ պառկեց ընելու՝ մտքի մեջ ծրագրելով, թե ինչ պիտի պատասխաներ բուժքույրին: Նա շատ էր մտահոգված...

Յետևյալ առավոտը, երբ պարբերական ձևով բուժքույրը մեզ նախաճաշ բերեց, ամեն ինչ պարզվեց: Երբ բուժքույրը Լարրիին թե-լադրեց ջերմաչափը դնել և ջերմությունը չափել, Լարրին չիմացավ ինչ պատասխանել: Բոլոր ծրագրած մտքերը խորտակվեցին այդ պահին: Նա դարձավ այն էլը, որ 7 ձև գիտի լողալու, բայց բոլորն էլ մոռանում է, երբ ընկնում է ջուրը: Բայց մի բան ասաց վերջապես.

- Կտրվեցավ:
- Ի՞նչը,- չհասկացավ բուժքույրը:
- Է՛, ջերմաչափը:
- Մարմինդ վնասվեցավ,- անհանգստացավ նա:
- Ոչ, պարզ կտրվեցավ:

Ու Լարրին խաբեց (որովհետև իրականում ջերմաչափը կտրվել էր, երբ Լարրին դրեց այն իր պատյանի անցքի մեջ և չիմանալով՝ ճնշեց ու կտրեց), թե ինչպես ինքը երեկ դնելուց առաջ թափահարում էր ջերմաչափը, երբ ծայրը կպավ սեղանին, և ջարդվեց:

- Լավ, մի մտահոգվիր, մեծ բան մը չէ,- հանգստացրեց նրան բուժքույրը և նախաճաշը բաժանելով երկուսին միջև՝ դուրս գնաց:

- Լավ պրծանք,- խոր շունչ քաշեց Լարրին:

Մնացած օրերն անցնում էին միալար ու միօրինակ: Բուժքույրը նույն ժամերին ուտելիք էր բերում ու արագ գնում: Այնուհետև մնում էինք մենակ: Ձբաղվում էինք ամենօրյա ժամանցներով՝ գիրք կարդալ, խաղեր խաղալ և այլն: Բայց չնայած սրան՝ ժամանակը թոջում էր: Իսկ մենք էլ անհամբեր սպասում էինք այն երանելի օրվան...

(շարունակելի) **Վրոյր ՉԱՔՐԻԵԼՅԱՆ**

ԼՈՒՍԱՐԱՐ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, 3. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcstert@mail.ru: www.lusarar.info Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 4.07.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: